Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № TTV-18 «Պառավաքարի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում» մրցույթի վերաբերյալ 04.12.2019թ. ժամը 15:38 procurement@atdf.am էլ.փոստի հասցեով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց՝ 1. «Քլորակայանի հետ կապված՝ ծավալաթերթով գրված է 2 հատ, իսկ բացատրագրի մեջ նշված է 3 հատ, խնդրում եմ ասել որով առաջնորդվենք։»

Պատասխան՝ Ինչպես նշված է № TTV-18 «Պառավաքարի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում» Մրցութային փաստաթղթի «Պայմանագրի հատուկ պայմաններ» VIII բաժնի ՊԸՊ 1.1 (լե) կետում. Մրցութային փաթեթին կցված Աշխատանքային նախագիծը կազմված է Պառավաքարի ամբողջ համայնքի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքների համար, սակայն տվյալ մրցույթով նախատեսվում է իրականացնել միայն առաջին փուլը, հետևաբար առաջնորդվել անհրաժեշտ է միայն ծավալաթերթում նշված քանակներով:

Հարց՝ 2. «Ծավալաթերթի հետ կապված 659 տողից ներքև կամ քանակը նշված չէ կամ ծավալի չափը, շտկված տարբերակը կուղարկեք։»

Պատասխան՝ Ինչպես նշված է № TTV-18 «Պառավաքարի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում» Մրցութային փաստաթղթի «Պայմանագրի հատուկ պայմաններ» VIII բաժնի ՊԸՊ 1.1 (լե) կետում. ծավալաթերթում 0-ական քանակներով հողային աշխատանքների տողերը նախատեսվում իրականացնել համայնքի կողմից (համայնքի ներդրման մաս):

Հարց՝ 3. «Ասֆալտապատման աշխատանքների հետ կապված՝ ծավալաթերթով նշված է 4սմ տեղ կա 5 սմ, իսկ նախագծով լրիվ գրված է 5սմ։»

Պատասխան՝ Ծավալաթերթի բաժին 16-ի 2-րդ տողի և բաժին 21-ի 2-րդ տողի նկարագրությունում նշված 4 սմ հաստությունը պետք է կարդալ 5 սմ: Շտկված ծավալաթերթի տարբերակը կարելի է ներբեռնել Մրցութային փաթեթով «Մրցութային փաթեթ - TTV-18 - ՇՏԿՎԱԾ» անվանումով ֆայլով Armeps համակարգով կամ www.atdf.am կայքի «Գնումներ-I.Աշխատանքներ» բաժնից նշված մրցույթի հղումով:

Հարգանքով,

Արթուր Սողոմոնյան
ՀՏԶՀ-ի գնումների բաժնի պետ

5 դեկտեմբերի 2019թ.